

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 31

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած խորհրդակցության

19.11.2018թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին

- Ա.Հովսեփյանը - մարզպետի տեղակալ
- Ս.Սարուխանյանը - մարզպետի տեղակալ
- Ա.Խաչատրյանը - մարզպետի տեղակալ
- Վ.Խաչատրյանը - գլխավոր քարտուղարի պաշտոնակատար
- Ն.Ասրյանը, Լ.Վարդանյանը, Ռ.Հարությունյանը, Ա.Ջանազյանը, Դ.Մանուչարյանը, Ա.Դեմիրճյանը, Ա.Օհանյանը, Լ.Բերոյանը, Ա.Սահակյանը, Ա.Ադլոյանը, Հ.Հակոբյանը, Հ.Մկրտչյանը, Ա.Եղիազարյանը, Մ.Սարգսյանը- ստորաբաժանումների ղեկավարներ և այլ պաշտոնատար անձինք
- Լ.Ասլանյանը - մարզպետի խորհրդական
- Լ.Տեր-Սիմոնյանը -մարզպետի խորհրդական
- Գ.Մարկոսյանը - մարզպետի օգնական
- Ռ.Խանզադյանը -մարզպետի օգնական

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. Նախորդ շաբաթվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփում

/Զեկ. մարզպետի տեղակալներ,
գլխավոր քարտուղարի տեղակալ,
ստորաբաժանումների ղեկավարներ/

2. Մարզպետարանի ստորաբաժանումների առաջիկա շաբաթվա ընթացքում կատարվելիք աշխատանքների մասին

/Ա.Ղուկասյան/

3. Այլ հարցեր:

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին, մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության պետի պաշտոնակատար Ա.Բեջանյանին՝

Ուսումնասիրել և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ հանրակրթական դպրոցների ուսուցիչների տրանսպորտային փոխադրումների հատուցման վերաբերյալ:

2. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին, մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների բաժնի պետ Ա. Եղիազարյանին՝

Ներկայացնել առաջարկություններ պարտուսից դուրս մնացած երեխաների դպրոց հաճախելու և դասարանների փոխադրման վերաբերյալ:

3. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետի պաշտոնակատար Ռ.Հարությունյանին՝

ա) Անհրաժեշտ հսկողություն սահմանել և պարտադիր մասնակցություն ապահովել հանրակրթական դպրոցներում կազմակերպվող ու անցկացվող մրցույթներին

բ) Համատեղ ուսումնասիրություններ կատարել և ներկայացնել տեղեկատվություն հանրակրթական դպրոցների անշարժ գույքի, տարածքների և սեփականության իրավունքի գրանցման վկայականներում առկա անճշտությունների վերաբերյալ

գ) Կատարված ուսումնասիրությունների հիման վրա ներկայացնել տեղեկատվություն դպրոցների պահպանման ծախսերի տարբերությունների առաջացման վերաբերյալ:

4. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ տնտեսական զարգացման վարչության հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ն.Ասրյանին՝

Ներկայացնել տեղեկատվություն Լոռու մարզպետարանի կողմից կնքված պայմանագրերի և դրանց պայմանների պատշաճ կատարման վերաբերյալ:

5. ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ Հ.Մկրտչյանին, ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Դ.Մանուչարյանին՝

Համատեղ քննարկումներ կազմակերպել և ներկայացնել առաջարկություններ ՄԱԿ-ի կողմից մարզի համայնքներում իրականացվող ծրագրային առաջարկների վերաբերյալ:

11/19/2018

X 

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

Արձ. Ս. Մակարյան
Հտ. 0322 /4-32-99/